թշնամիների դէմ, խորտակեց Լեռնահայաստանում վխտացող թաթար թափառական ցեղերի իշխանութիւնը եւ իր բազկի ու հայ ժողովրդի յամառ ջանքերի շնորհիւ՝ Սիւնեաց երկրում անկախութիւն հաստատեց:

Նադիրի նախորդը՝ Շահ Թահմազը նրա ընդունակութիւններն ու քաջագործութիւնները տեսնելով, մանաւանդ ըմբռնելով, որ Հայաստանի այդ անկախ բեկորը մի ամուր պատուար կարող է լինել Պարսկաստանի համար ընդդէմ թշնամի Տաճկաստանի, ճանաչեց Դաւթի իշխանութիւնը պատմական Սիւնիքի, Արցախի եւ Փայտակարանի վրայ մինչեւ Կուր գետը, շնորհելով նրան մինչեւ իսկ դրամ կտրելու իրաւունք1):

Բայց ինչպէս երեւում է, ճակատագիրը այլ կերպ էր տնօրինել: Ասացինք արդէն, որ Մինաս վարդապետը, Օրիի ու Պետրոս Մեծի մահից յետոյ, դեռ երկա՛ր մնաց Ռուսաստանում, երկա՛ր բախեց Պետրոս Մեծի յաջորդների դռները, սակայն ապարդիւն: Հայաստանի եւ հայ ժողովրդի բախտով այլեւս հետաքրքրուող չկար:

Իր ջանքերի անյաջողութիւնը տեսնելով, խեղճ վարդապետը վերջապէս ինքն էլ յուսահատուեց, լքուած ամէնքից եւ ծայրայեղ թշուառութեան մատնուած: Նրան շատ էր դառնացնում մասնաւորապէս այն հանգամանքը, որ ինքը վերջ ի վերջոյ խաբերայ դուրս եկաւ մելիքների ու հայ ժողովրդի առջեւ: Հաւատալով իրեն եղած խոստումներին, նա շարունակ յուսադրել էր նրանց, դեղեցիկ երազներով կերակրել: Իսկ այժմ բաց աչքերով տեսնում էր, որ իրեն խաբել են, որ այդ ամէնը միայն դատարկ հնչիւններ են եղել, սատանի սնամէջ բշտիկներ:

Այո՛, վարդապետի խեղճը տանջում էր իրան, որովհետեւ նա ո՛չ միայն որեւէ օգուտ չբերեց իր երկրին, այլ ընդհակառակը, իր գործունէութեամբ նորանոր աղէտների պատճառ հանդիսացաւ ե՛ւ իր ժողովրդի, ե՛ւ մի շարք ականաւոր անհատների համար:

Ամենից առաջ՝ հայութեան թշնամիները — տաճիկները, պարսիկները եւ Կովկասեան Լեռնականները — արիւնի ու մոխրի հովիտ դարձրին Հայաստանը, չարաչար կերպով այդպիսով վրէժ լուծելով հայ ժողովրդից՝ նրա ռուսասիրութեան համար:

Երկրորդ՝ իր պետը եւ շարժման ղեկավարը — Գանձասարի կաթողիկոսը — ծանր թշնամանքի ենթարկուեց թէ՛ վերոյիշեալ մահմեդականների եւ թէ՛ հայ մելիքների կողմից ու իր կեանքը վերջացրեց վիրաւորանքներից ու վշտից խորտակուած:

Երրորդ՝ պառակտում ընկաւ հայ մելիքների մէջ — անյաջողութիւնը պառակտման ու դժուութիւնների մայրն է —եւ այժմ նրանք ըսկըսեցին կա՛մ իրար դէմ կռուել եւ կամ ընդհանուրի գործը մոռացած, իւրաքանչիւրն իր գըլուխն ազատելու մասին անհատաբար մտածել:

Եւ վերջապէս չորրորդ՝ ինքը մոռացուած ու արհամարհուած է այժմ իր բոլոր բարեկամների ու թշնամիների կողմից — անգամ ռուս կառավարութեան, որի սրինգն է փչել նա շարունակ — եւ նիւթական ու բարոյական ամենածանր վիճակի դատապարտուած:

Այդ ամէնը դժբախտ վարդապետը դառն շեշտով ներկայացնում է ռուս կառավարութեանը տուած իր վերջին զեկուցման մէջ — 1736 թ. Մարտ — ուղղուած Սիմէոն Անդրեեւիչ Սալտըկովին1).—

— 35 տարի անձնուէր ծառայեցի ռուս պետութեան շահերին — գրում է նա: Ցաճախ իմ ծախսով մարդիկ պահեցի եւ դէս ու դէն ուղարկեցի՝ նոյն գործի համար: Բազմաթիւ նամակներով ու թղթակցութիւններով, ինչպէս նաեւ բազմաղան ջանքեր գործադրելով, հայ ժողովրդին ես կապեցի Ռուսաստանի հետ: Իսկ այդ բոլորի փոխարէն այժմ յետին թշուառութեան մէջ եմ ու լքուած ամէնքից: Ես յանցաւոր եմ հայ ժողովրդի առջեւ, որովհետեւ իմ խոստումները ռուսական օգնութեան մասին մնացին «ձայն բարբառոյ յանապատի» եւ հայութեան կոտորածների պատճառ դարձան:

Այո՛, վարդապետը արդար էր եւ իրաւունք ունէր:

---

1) Զամչեան՝ «Հայ. Պատ.» Գ., եր. 797:

1) Եղեանց, «Յարաբերութիւններ», փաստաթուղթ թիւ 305: